ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (31-9-Մ2-2) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ՝ ԺԱՄԸ 14:30-ԻՆ, ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ դատախազության վիճակագրության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (31-9-Մ2-2) մրցույթի թեստավորման պատասխանատու Քրիստինե Գևորգյանը, մինչև թեստավորումը սկսելը, անձը հաստատող փաստաթղթի հիման վրա ստուգեց թեստավորմանը մասնակցելու թույլտվություն ստացած և թեստավորմանը ներկայացած քաղաքացիներ՝

1. Մարինա Ազիզբեկի Արզումանյանի,
2. Սեմյոն Շալվայի Բաբայանի,
3. Արսեն Լյովայի Կարապետյանի,
4. Հայկ Լևոնի Ղազարյանի

ինքնությունը՝ թույլատրելու համար նրանց մուտքը մրցույթի թեստավորման սենյակ:

Մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած Հայկ Արամի Սարգսյանը, Տիգրան Արմենի Ծատուրյանը և Աննա Նորիկի Հազեյանը չէին ներկայացել մրցույթի թեստավորման փուլին:

Մասնակիցների ինքնությունը ստուգելու ընթացքում մրցույթի մասնակիցներ Ս. Բաբայանը և Հ. Ղազարյանն աղմկել ու դիտավորյալ խոչընդոտել են մրցույթի մեկնարկին՝ թեստավորման սենյակ իրենց հետ բերելով տեխնիկական միջոցներ: Մրցույթի թեստավորման պատասխանատու Քրիստինե Գևորգյանը զգուշացրել է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ արգելվում է որևէ կապի և (կամ) տեխնիկական միջոց մրցույթի անցկացման սենյակ ներս բերելը, որից հետո Ս. Բաբայանը բղավել է, որ դա հակասահմանադրական է: Լարված իրավիճակը մեղմելու նպատակով Ք. Գևորգյանը թույլ է տվել կապի և տեխնիկական բոլոր միջոցները դնել թեստավորման սենյակում՝ առանձին հատվածում: Այդ ընթացքում Ս. Բաբայանն անդադար աղմկել է, բղավել, որ եթե Ք. Գևորգյանը 14:20-ից հետո որևէ մասնակցի թույլատրի մուտք գործել թեստավորման սենյակ, ապա ինքը բողոքարկելու է և Ք. Գևորգյանը պատասխանատվության է ենթարկվելու:

Մրցույթի մասնակիցներին թույլատրվել է նստել իրենց նախընտրած համակարգիչների մոտ: Այդ ընթացքում Ս. Բաբայանը և Հ. Ղազարյանն անընդմեջ խանգարել են թեստավորման պատասխանատուին՝ թույլ չտալով վերջինս մինչև թեստի կազմումը ներկայացնել թեստավորման անցկացման ընթացակարգը: Մրցույթի թեստավորման մասնակից Արսեն Կարապետյանը և Մարինա Արզումանյանը պահանջել են,

որպեսզի Ս. Բաբայանը և Հ. Ղազարյանը լռեն և թույլ տան շարունակել մրցույթի ընթացքը, որից հետո Ս. Բաբայանը գրպանից հանել և սեղանին է դրել դեղորայքի նմանվող իրեր, իսկ Հ. Ղազարյանը պահանջել է, որ ինքը պետք է իր պայուսակից ջուր վերցնի: Ք. Գևորգյանը խնդրել է Ս. Բաբայանին սեղանից հեռացնել վերոնշյալ դեղանման իրերը, որից հետո Ս. Բաբայանը բղավել է, որ ատամի ցավ ունի և խմել է փոշի հիշեցնող ինչ-որ զանգված:

Մրցույթի ընթացակարգը ներկայացնելիս Ս. Բաբայանը բարձր բղավել է, որ ինքը դա անգիր գիտի, 180 անգամ մրցույթի է մասնակցել: Ք. Գևորգյանը նշել է, որ դա ընթացակարգի մաս է և կրկին խնդրել է չխոչընդոտել պատասխանատուի աշխատանքներին և մյուս մասնակիցներին: Ս. Բաբայանը կրկին շարունակել է աղմկել, որից հետո մրցույթի մասնակից Ա. Կարապետյանը ևս պահանջել է Ս. Բաբայանից և Հ. Ղազարյանից չխոչընդոտել ընթացքին, որին ի պատասխան Ս. Բաբայանը Ա. Կարապետյանին ասել է, որ. «Հա՜ ճիշտա, երևի դու ես իրանց պոտենցիալ թեկնածուն: Ես լավ գիտեմ՝ դու իրավաբան ես, օպեր ես ոստիկանության կամ էլ քննիչ»:

Պատասխանատու Ք. Գևորգյանը խնդրել է դադարեցնել աղմուկը և մինչև թեստը կազմումը, մանրամասն ներկայացրել է թեստավորման անցկացման և թեստավորման արդյունքների բողոքարկման ընթացակարգերը՝ սպառիչ պատասխանելով թեստավորման մասնակիցների բոլոր հարցերին:

Թեստավորման պատասխանատուն, հավաստիանալով, որ մասնակիցները պատրաստ են և հասկացել են թեստավորման անցկացման և թեստային առաջադրանքների կատարման ընթացակարգերը, թույլատրել է նրանց մուտքագրել տրամադրված գաղտնաբառերը՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի թեստավորման անցկացման էլեկտրոնային համակարգ մուտք գործելու համար:

Թեստավորման պատասխանատուն քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում նախօրոք զետեղված և կոդավորված թեստավորման առաջադրանքներից պատահական ընտրությամբ կազմել է թեստը: Թեստի ձևավորումից հետո մասնակիցները սկսել են թեստային առաջադրանքների կատարումը:

Թեստավորման փուլն սկսվել է 2021 թվականի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 14:30-ին:

Ս. Բաբայանը և Հ. Ղազարյանը տեղից անընդմեջ բացականչել են, որ հարցերը սխալ են և որ այդ ամենը դիտավորյալ է արվում: Ք. Գևորգյանը կրկին խնդրել է չխոսել տեղից՝ նշելով, որ եթե հարցերը սխալ են ձևակերպված, ապա իրենք հնարավորություն են ունենալու բողոքարկել իրենց կարծիքով «սխալ հարցերը»:

Թեստավորման ընթացքում՝ ժամը 14:52-ին, Ս. Բաբայանի համակարգչի էկրանին հայտնվել է կապի խափանման վերաբերյալ պատուհան, որից անմիջապես հետո մրցույթի թեստավորման սենյակ է հրավիրվել համակարգչային մասնագետ Զ. Սարգսյանը՝ անմիջապես կարգավորելով խնդիրը: Ք. Գևորգյանը հեռախոսով այդ մասին տեղեկացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի աշխատակից Հրայր Գինոսյանին, որից հետո Ս. Բաբայանը սկսել է բղավել՝ նշելով, որ «Էդ Գինոսյանին ասեք՝ բլոկ չդնի էջս, սաղ ինքնա անում»: Համակարգչային մասնագետ Զ. Սարգսյանը Ս. Բաբայանին բացատրել է, որ դա ընդամենը՝ կապի խնդիր էր:

Թեստավորման մյուս մասնակիցները պարբերաբար բողոքել են, որ նման պայմաններում կենտրոնանալ հնարավոր չէ: Ս. Բաբայանը Ք. Գևորգյանին դիտողություններ է արել՝ ասելով, թե որտեղ պետք է կանգնի պատասխանատուն և այլն:

Թեստավորման ընթացքում՝ ժամը 15:20-ի սահմաններում պարզ դարձավ, որ թեստավորման պատասխանատու Ք. Գևորգյանը շփոթմամբ թեստավորմանը մասնակցելու իրավունք ստացած, սակայն թեստավորմանը չներկայացած Հայկ Արամի Սարգսյանի գաղտնաբառն է տրամադրել մրցույթի մասնակից Հայկ Ղազայանին:

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից տեղեկանալով ի հայտ եկած խնդրի մասին՝ ՀՀ դատախազության անձնակազմի կառավարման վարչության պետ Ռուզաննա Խաչատրյանը հեռախոսային կապի միջոցով՝ բարձրախոսով, մասնակիցներին ներկայացրել է ի հայտ եկած խնդրի մասին, ներողություն խնդրել և հայտնել, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համապատասխան աշխատակիցների հետ խորհրդակցելուց հետո, որոշվել է կասեցնել մրցույթի թեստավորման գործընթացը:

Դրանից հետո Ս. Բաբայանը Ք. Գևորգյանից բղավելով պահանջել է հեռախոսը, ասելով. «Տուր սովորացնեմ ձեր պետին ոնց մրցույթ կազմակերպեն»:

Ք. Գևորգյանը, ընդունելով թույլ տված սխալը, մասնակիցներից ևս ներողություն խնդրեց՝ նշելով, որ հարկավոր է դադարեցնել աշխատանքը և դուրս գալ թեստավորման սենյակից:

Ս. Բաբայանը և Հ. Ղազարյանը խուլիգանական պահվածք դրսևորելով՝ սկսել են գոռալ, սպառնալ Ք. Գևորգյանին՝ բացականչելով «քո համար շատ վատա լինելու»:

Քրիստինե Գևորգյանը նշել է, որ սույն խնդիրը առաջացել է իրենց՝ Ս. Բաբայանի և Հ. Ղազարյանի պահվածքի պատճառով և խնդրել է դուրս գալ սենյակից: Մրցույթի մասնակից Արսեն Կարապետյանը ևս միջամտել է և ասել, որ Ս. Բաբայանի և Հ. Ղազարյանի կողմից դիտավորյալ պրովոկացիաներ են կազմակերպվել, որպեսզի թեստավորումը ձախողվի:

Որպեսզի անց Ս. Բաբայանը կրկին մտել է թեստավորման սենյակ և Ք. Գևորգյանին ասել. «Ո՞նց անենք՝ էս գործը փակվի գնա, մեղք ես»: Ք. Գևորգյանն անվտանգության աշխատակցին խնդրել է սենյակից դուրս հրավիրել Ս. Բաբայանին:

Մրցույթի մասնակիցներ Մ. Արզումանյանը և Ա. Կարապետյանը նշել են, որ իրենք ևս ցանկանում են մասնակցել Ս. Բաբայանի և Հ. Ղազարյանի դրսևորած վարքի արձանագրմանը:

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ **Ք. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ՝ **ՄԱՐԻՆԱ ԱԶԻԶԲԵԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ՝ **ԱՐՍԵՆ ԼՅՈՎԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**